**Տեղեկատվություն**

Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են հավաստագրեր՝ աջակցող միջոցներ ձեռք բերելու համար: Շահառուն կամ նրա ներկայացուցիչը աջակցող միջոց ստանալու համար հավաստագիր ձեռք բերելու նպատակով կարող է դիմել մի քանի եղանակով.

1. առձեռն կամ փոստային կապի միջոցով դիմում է ներկայացնում նախարարություն,
2. առձեռն կամ փոստային կապի միջոցով դիմում է ներկայացնում փաստացի բնակության վայրն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին),
3. էլեկտրոնային եղանակով գրավոր դիմում է ներկայացնում նախարարություն՝ www.info@mlsa.am հասցեին,
4. առողջական վիճակով պայմանավորված շահառուն կարող է հեռախոսազանգի կամ փոստային առաքման միջոցով դիմում ներկայացնել սոցիալական աջակցության տարածքային գործակալություն՝ հավաստագիր ստանալու համար դիմումն իր բնակության վայրում լրացնելու նպատակով տունայց կազմակերպելու վերաբերյալ:

Հավաստագրերի հիման վրա կազմակերպվող գործընթացի արդյունքում բավականին ընդլայնվել է **աջակցող միջոցների տեսակները** և տրամադրող **կազմակերպությունների ցանկը:** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mlsa.am կայքէջում՝ «Աջակցող միջոցների տրամադրում» բաժնում տեղադրված է կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ աջակցող միջոցի տեսակի, դրա գնային արժեքի, ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ:

Դիմումի պատասխանը ստանալուց հետո շահառուն կամ նրա ներկայացուցիչը կարող են այցելել տարբեր կազմակերպություններ, ծանոթանալ աջակցող միջոցների տեսակների և գների հետ, որից հետո դիմել իրենց նախընտրած կազմակերպություն՝ ծառայությունն ստանալու համար: Կազմակերպություններում առկա է աջակցող միջոցների լայն տեսականի: Ցանկալի է, որպեսզի շահառուները նախապես ծանոթանան տեսականուն և ընտրեն իրենց կարիքին համապատասխան աջակցող միջոցը:

Ցանկալի է նաև, որպեսզի շահառուն ինքն այցելի կազմակերպություն՝ աջակցող միջոցը ստանալու համար, քանի որ այլ անձը չի կարող շահառուի ֆունկցիոնալ առանձնահատկություններին համարժեք ընտրություն կատարել:

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
# ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Պետական բյուջեի միջոցներով տրամադրվող աջակցող միջոցներն են՝**

**1.** Վերին և ստորին վերջույթների պրոթեզներ
**2.** ակնագնդի պրոթեզ
**3.** ձայնալարերի պրոթեզ և ձայնաստեղծ սարք
**4.** կրծքագեղձի էկզոպրոթեզ
**5.** օրթեզներ
**6.** սեղմիրան
**7.** աղեկապ
**8.** ծնկակալ
**9.** ռեկլինատոր
**10.** կոշիկներ (պրոթեզի, օրթեզի, օրթոպեդիկ)
**11.** ոտնաման (բաշմակ)
**12.** գուլպա (անդամահատված ծայրատի համար՝ սիլիկոնե, բրդյա կամ բամբակյա)
**13.** ձեռնափայտ
**14.** հենակ
**15.** լսողական սարքի ներդիր
**16.** անվասայլակ
**17.** փոքր տրամաչափի սայլակ
**18.** քայլակ
**19.** լսողական սարք
**20.** ներդիր հարթաթաթության
**21.** օրթոպեդիկ շտկող ներդիր:

Աջակցող միջոցները պետական բյուջեի միջոցներ հաշվին անվճար տրամադրվում են հետևյալ անձանց (շահառուներին)՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց.

2. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի անդամներին (սոցիալապես անապահով անձինք).

3. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց.

4. Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիներին.

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների (այդ թվում՝ պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների) ընտանիքի անդամներին.

6. Երեխաներին՝ անկախ հաշմանդամություն ունենալու կամ սոցիալապես անապահով լինելու հանգամանքից.

7. Ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամներին:

Որոշ աջակցող միջոցներ տրամադրվում են միայն հաշմանդամություն ունեցող անձանց, դրանք են՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզները, օրթեզները, ձայնաստեղծ սարքերը, աչքի պրոթեզները, սայլակները, քայլակները:

Շահառուն կամ նրա ներկայացուցիչը աջակցող միջոց ստանալու համար հավաստագիր ձեռք բերելու նպատակով կարող է դիմել մի քանի եղանակով.

1. առձեռն կամ փոստային կապի միջոցով դիմում է ներկայացնում նախարարություն,

2. առձեռն կամ փոստային կապի միջոցով դիմում է ներկայացնում սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին),

3. էլեկտրոնային եղանակով գրավոր դիմում է ներկայացնում նախարարություն՝ www.info@mlsa.am հասցեին,

4. առողջական վիճակով պայմանավորված շահառուն կարող է հեռախոսազանգի կամ փոստային առաքման միջոցով դիմում ներկայացնել սոցիալական աջակցության տարածքային գործակալություն՝ հավաստագիր ստանալու համար դիմումն իր բնակության վայրում լրացնելու նպատակով տունայց կազմակերպելու վերաբերյալ: Դիմումը կամ հեռախոսազանգն ստանալուց հետո եռօրյա ժամկետում կազմակերպվում է տնային այցելություն, կազմակերպվում դիմումի լրացնելը և ներկայացնելը:

Ընդ որում, առձեռն դիմելու դեպքում՝ շահառուն կամ նրա ներկայացուցիչը հավաստագիր տրամադրող մարմին է ներկայացնում փաստաթղթերի բնօրինակները, փոստային առաքման դեպքում՝ բոլոր փաստաթղթերի բնօրինակները, բացառությամբ անձը հաստատող փաստաթղթերի, կացության քարտի, կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի:

Դիմումի հետ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. 16 տարեկանից բարձր տարիքի անձիք՝ անձնագիրը կամ նույնականացման քարտը,

2. նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտը կամ սահմանված կարգով տրամադրված՝ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքը.

3. մինչև 16 տարեկան երեխաների դեպքում՝ ծննդյան վկայականը,

4. Եթե դիմումը տրվում է ներկայացուցչի կողմից, ապա պետք ներկայացվի նաև ներկայացուցչի նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ և շահառուի գրավոր լիազորագիրը: Լիազորագիրը կարող է գրվել նաև պարզ, հասարակ ձևով, առանց նոտարի հաստատման:

5. Եթե շահառուն հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձ՝ նաև հետևյալ փաստաթղթերը.

1) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը (տրվում է բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից),

2) վերականգնողական անհատական ծրագիրը (ՎԱԾ) կամ տեղեկանք աջակցող միջոցների երաշխավորության վերաբերյալ (տրվում է բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից):

Որոշ աջակցող միջոցների համար անհրաժեշտ են նաև լրացուցիչ փաստաթղթեր՝

1. լսողական սարքերի հավաստագրի տրամադրման համար՝ անձը պետք է ներկայացնի նաև աուդիոգրամմա (աուդիոմետրիայի տվյալները) և տեղեկանք (տեղեկանքը պետք է լինի ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 1151-Ն որոշման N 6 հավելվածով հաստատված ձևաչափով), որ շահառուն լսողական սարքի կարիք ունի:

2. լսողական սարքերի ներդիրների համար՝ լսողական սարք կրելու մասին բժշկական կազմակերպության կողմից տրամադրված փաստաթուղթ՝ հաստատված այդ կազմակերպության ներկայացուցչի ստորագրությամբ և կնիքով.

3. Հաշմանդամություն չունեցող անձիք որևէ աջակցող միջոց (բացառությամբ լսողական սարքի, որի համար սահմանված է վերոնշյալ ձևաչափը) ստանալու համար պետք է ներկայացնեն համապատասխան բժշկի տեղեկանք՝ այդ միջոցը կրելու կամ ցուցված լինելու վերաբերյալ:

Շահառուները ներկայացնում են իրենց կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Եթե փաստաթղթերը ներկայցվել են ՍԱՏԳ(Բ), ապա դրանք ստանալուց հետո ՍԱՏԳ(Բ)-ն ստուգում է դրանց լիարժեքությունը և **երկու աշխատանքային օրվա** ընթացքում ուղարկում նախարարություն: Նախարարությունը նույնպես ստուգում է դրանց լիարժեքությունը և երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում հավաստագիր տրամադրող մարմին: Վերջինս դիմումի և փաստաթղթերի հիման վրա, հավաստագիրը վերբեռնում (կցում) է տեղեկատվական համակարգ և փոստային առաքմամբ դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում դիմողին: Ներկայացված փաստաթղթերում անճշտություններ կամ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում նախարարությունը կամ հավաստագիր տրամադրող մարմինը **երկու աշխատանքային օրվա** ընթացքում տեղեկացնում է դիմողին: Դիմողը հավաստագիր ստանալու համար որևէ կազմակերպություն կամ մարմին չի գնում:

Հավաստագիր տրամադրող մարմինը դիմումի պատասխանի մեջ ներառում է նաև բոլոր այն կազմակերպությունների անունները, հասցեները, կոնտակտային տվյալները, որտեղից շահառուն կարող է ստանալ իրեն անհրաժեշտ աջակցող միջոցը(ները):

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջում՝ mlsa.am/ աջակցող միջոցներ/ հասցեում կտեղադրվի այդ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ աջակցող միջոցի տեսակի, դրա գնային արժեքի, անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ:

Դիմումի պատասխանը ստանալուց հետո շահառուն կամ նրա ներկայացուցիչը կարող են այցելել տարբեր կազմակերպություններ, ծանոթանալ աջակցող միջոցների տեսակների և գների հետ, որից հետո դիմեն իրենց նախընտրած կազմակերպություն՝ ծառայությունն ստանալու համար: Կազմակերպություններում առկա է աջակցող միջոցների լայն տեսականի: Ցանկալի է, որպեսզի շահառուները նախապես ծանոթանան տեսականուն և ընտրեն իրենց կարիքին համապատասխան աջակցող միջոցը:

Ցանկալի է նաև, որպեսզի շահառուն ինքն այցելի կազմակերպություն, աջակցող միջոցը ստանալու համար, որովհետև ուրիշ մեկը չի կարող անձի ֆունկցիոնալ առանձնահատկություններին համարժեք ընտրություն կատարել:

Շահառուն ստանում է իրեն տրամադրված հավաստագրի գնին համարժեք աջակցող միջոցներ:

Եթե շահառուի նախընտրած աջակցող միջոցների գինը բարձր է հավաստագրի համար սահմանված գնային արժեքից, ապա շահառուն իր ցանկությամբ կարող է ձեռք բերել այդ միջոցը՝ վճարելով արժեքի տարբերությունը:

Անձն իր ցանկությամբ սայլակի, լսողական սարքի, վերին կամ ստորին վերջույթների պրոթեզների, կրծքագեղձի պրոթեզի փոխարեն կարող է հավաստագրի գնային արժեքի սահմաններում ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից այլ պարագաներ (մարտկոցներ, անիվներ, կառավարման վահանակներ և այլն), որոնք օգտագործվում են դրանց ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար:

Եթե անձը նախընտրում է ձեռք բերել ավելի էժան աջակցող միջոց, քան հավաստագրի գնային արժեքն է, ապա կարող է հավաստագրի ավելացած գնային արժեքի սահմաններում նույն կազմակերպությունից ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից պարագաներ (լրացուցիչ անիվներ, ոտնակներ, հակախոցային բարձիկներ, մարտկոցներ և այլն), որոնք օգտագործվում են պարագայի ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար, իսկ սեղմիրանների և աղեկապերի դեպքում նաև երկրորդ սեղմիրանը կամ աղեկապը՝ որպես փոխնորդ:

Նոր աջակցող միջոցն ստանալու դեպքում շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը, իսկ անձի մահվան դեպքում՝ ընտանիքի անդամները նախորդ ստացած աջակցող միջոցը կարող են վերադարձնել հավաստագիր տրամադրող մարմին: Վերադարձված հաշմանդամի աջակցող միջոցներն օգտագործվում են դրա կարիքն ունեցող այլ անձանց ժամանակավոր տրամադրելու նպատակով:

Աջակցող միջոցները տրամադրվում են սահմանված ժամկետներով, որից հետո շահառուն կարող է դիմել կրկին ստանալու համար: Ստորև ներկայացվում են աջակցող միջոցները՝ ըստ օգտագործման ժամկետների:

| NN | Անվանումը | Օգտագործման ժամկետը |
|---|---|---|
| 1. | **Պրոթեզներ** | |
| 1) | ստորին վերջույթների բուժամարզական պրոթեզ | մեծահասակներին՝ մեկ տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 2) | ստորին վերջույթների հիմնական պրոթեզ | մեծահասակներին՝ երեք տարի |
| | | երեխաներին՝ մեկ տարի |

| | | |
|---|---|---|
| 3) | վերին վերջույթների պրոթեզ | մեծահասակներին՝ չորս տարի |
| | | երեխաներին՝ երկու տարի |
| 4) | ակնագնդի պրոթեզ | մեծահասակներին՝ երկու տարի, |
| | | երեխաներին՝ մեկ տարի |
| 5) | ձայնալարերի պրոթեզ և ձայնաստեղծ սարք | հինգ տարի |
| 6) | կրծքագեղձի էկզոպրոթեզ | մեկ տարի |
| **Վերականգնողական պարագաներ և վերականգնման այլ տեխնիկական օժանդակ սարքեր** | | |
| 2. | Օրթեզներ | |
| 1) | վերին վերջույթի | մեծահասակներին՝ երկու տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 2) | ստորին վերջույթի՝ առանց հոդի | մեծահասակներին՝ մեկ տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 3) | ստորին վերջույթի՝ հոդով | մեծահասակներին՝ երկու տարի |
| | | երեխաներին՝ մեկ տարի |
| 4) | պարանոցի | մեծահասակներին՝ մեկ տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 5) | օրթեզ-սեղմիրան | մեծահասակներին՝ մեկ տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 6) | օրթոպրոթեզ | մեծահասակներին՝ երկու տարի |
| | | երեխաներին՝ մեկ տարի |
| 3. | Սեղմիրան | մեծահասակներին՝ երկու տարի |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 4. | Աղեկապ | մեկ տարի |
| 5. | Ծնկակալ | մեկ տարի |
| 6. | Ռեկլինատոր | մեկ տարի |
| 7. | Կոշիկներ | |
| 1) | պրոթեզի | տարեկան՝ երկու զույգ |
| 2) | օրթեզի | տարեկան՝ երկու զույգ |
| 3) | օրթոպեդիկ | տարեկան՝ երկու զույգ |
| 8. | Ոտնաման (բաշմակ) | մեկ տարի |

| | | |
|---|---|---|
| 9. | Գուլպա (անդամահատված ծայրատի համար) | տարեկան՝ 3 հատ |
| 10. | Ձեռնափայտ՝ մեկ լրացուցիչ ռետինով | երկու տարի |
| 11. | Հենակ՝ մեկ լրացուցիչ ռետինով | երկու տարի |
| 12. | Սուպինատոր/ներդիր | մեծահասակներին՝ մեկ տարի, |
| | | երեխաներին՝ վեց ամիս |
| 13. | Լսողական սարքի ներդիր | մեկ տարի |
| 14. | Անվասայլակ | երեք տարի |
| 15. | Փոքր տրամաչափի սայլակ | երկու տարի |
| 16. | Քայլակ | մեծահասակներին՝ երեք տարի |
| | | երեխաներին՝ երկու տարի |
| 17. | Լսողական սարք | 12-29 տարեկան անձանց՝ 5 տարի |
| | | 30 տարեկան և ավելի բարձր տարիքի՝ հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց՝ 3 տարի |